ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Իրինա Մելքոնյանի (գրանցման համար՝ N 290.10464)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9712-2019 գրությամբ Ա/Ձ Իրինա Մելքոնյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 04.06.2019թ. թիվ /18-2/25827-2019 գրության հիման վրա, 11.06.2019թ. թիվ /26/9712-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Իրինա Մելքոնյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Իրինա Մելքոնյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ա/Ձ Իրինա Մելքոնյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/86 ընթացակարգի շրջանակներում 17.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն իր կողմից ներկայացված հայտի թիվ 2.1 հավելվածում, այն է՝ անձնագրային տվյալներում տեղ է գտել վրիպակ, նշված չի եղել անձնագրի սերիան: Սակայն Մասնակիցը չի տեսել գնահատող հանձնաժողովի ծանուցումը, ուստի չի շտկել անհամապատասխանությունը:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.06.2019թ. թիվ /18-2/25827-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Իրինա Մելքոնյան ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետի 29.05.2019թ. Իրինա Մելքոնյան ԱՁ-ն ծանուցվել է ներկայացնել հայտերի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել (շտկված փաստաթղթերը ներկայացվել են 31.05.2019թ.) և Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/86 ընթացակարգի շրջանակներում 17.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Իրինա Մելքոնյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Իրինա Մելքոնյանի կողմից ներկայացված թիվ 2.1 հավելվածը սխալ է լրացված:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ծանուցել Ա/Ձ Իրինա Մելքոնյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել թիվ 2.1 հավելվածում տեղ գտած անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Իրինա Մելքոնյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9712-2019 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 04.06.2019թ. թիվ /18-2/25827-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ

և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Իրինա Մելքոնյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ա/Ձ Իրինա Մելքոնյանի կողմից ներկայացված թիվ 2.1 հավելվածը սխալ է լրացված:

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել Ա/Ձ Իրինա Մելքոնյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել թիվ 2.1 հավելվածում տեղ գտած անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ա/Ձ Իրինա Մելքոնյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի թիվ 2.1-ով հավելվածով (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ)՝ պահանջվել է, որ մասնակիցը ներկայացնում է նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը:

Ա/Ձ Իրինա Մելքոնյանի Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2.1 հավելվածում նշվել է անձնագրի համարը, տրման ամսաթիվը և տվյալներ, թե ում կողմից է այն տրվել (ծածկագիր):

Մասնակցի կողմից հայտի թիվ 2.1 հավելվածում չի նշվել անձնագրի **սերիան:**

ՀՀ կառավարության 25.12.1998թ. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» N 821 որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի 1-ին էջի վերևի մասում հայերեն և անգլերեն, գլխատառերով տպագրվում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառակապակցությունը, իսկ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերից փոքր-ինչ ներքև՝ հայերեն և անգլերեն, գլխատառերով՝ «ԱՆՁՆԱԳԻՐ» բառը: Նույն էջի ներքևի մասում, կենտրոնում նշվում են **անձնագրի սերիան և համարը:**

Նույն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերը պատրաստվում են սերիաներով՝ յուրաքանչյուրը 500.000 (հինգ հարյուր հազար) տպաքանակով: Սերիաները նշագրվում են լատինական գլխատառերով (AA, AB, AC, AE և այլն): Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի

համարակալումն սկսվում է 0200001 և ավարտվում է 0700000 թվանշաններով բացառությամբ AF սերիայի անձնագրերի, որոնց համարակալումն սկսվում է 0200001 և ավարտվում 0800000 թվանշաններով և AM սերիայի անձնագրերի, որոնց համարակալումն սկսվում է 0200001 և ավարտվում 0950000 թվանշաններով և AN սերիայի անձնագրերի, որոնց համարակալումն սկսվում է 0200001 և ավարտվում 0800000 թվանշաններով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ա/Ձ Իրինա Մելքոնյանի՝ Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2.1 հավելվածը, գտնում եմ, որ Մասնակցի կողմից անձնագրի սերիայի նշված չլինելը չի կարող դիտարկվել վերջինիս կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ՀՀ կառավարության 25.12.1998թ. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» N 821 որոշմամբ անձնագրի «սերիա» և «համար» հասկացությունները տարանջատված են և չեն նույնացվում, իսկ հրավերի 2.1 հավելվածով պահանջվել է ներկայացնել նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և **համարը**, ինչը և ներկայացվել է Ա/Ձ Իրինա Մելքոնյանի կողմից:

Գտնում եմ, որ Ա/Ձ Իրինա Մելքոնյանը «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա չեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ /26/9712-2019 գրությամբ Ա/Ձ Իրինա Մելքոնյանին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**